ԻՆՉՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Համայնքային աշխատանք

Համայնքի աշխատանքը աշխատանքի մեթոդ է և ուղղություն։ Յուրաքանչյուր պրակտիկ աշխատող նաև համայնքային աշխատող է, քանի որ այցելուի

հիմնախնդիրները լուծելիս ստիպված է լինում աշխատել նաև համայնքի հետ։ Համայնքն այն միջավայրն է, որտեղ ապրում է այցելուն, և որտեղ ծագել է նրա հիմնախնդիրը։ Հնարավոր է, որ հիմնախնդրի պատճառները գտնվեն համայնքային կառուցվածքներում ու հարաբերություններում, իսկ առանց պատճառները վերացնելու հնարավոր չէ նման դեպքերում օգնել այցելուին։ Բացի այդ, համայնքն ունի հսկայական ներուժ, որն աշխատողը կարող է ներգրավել այցելուի կարիքների բավարարման գործում։ Աշխատանքի այնպիսի մոդելի կիրառումը, ինչպես, օրինակ, էկոլոգիական մոտեցումը, պարտադիր պահանջում է հաշվառել շրջակա միջավայրի հնարավորությունները և օգտագործել դրանք այցելուի խնդիրների լուծման ժամանակ։ Բացի վերոհիշյալից, աշխատողը համայնքի հետ սկսում է աշխատել նաև այն դեպքում, երբ համայնքը հանդես է գալիս որպես այցելու և ունենում է իր հիմնախնդիրը։ Այս դեպքում աշխատողը համայնքի բնակիչներին ընկալում է որպես հավաքական ամբողջություն և սկսում իրականացնել համայնքային զարգացում և կազմակերպում։ Սա մի գործընթաց է, երբ աշխատողն աջակցում է համայնքին գնահատելու, ծրագրելու և համակարգելու սեփական ներուժը առողջապահական, բարեկեցության և վերարատադրության կարիքները հոգալու համար։ Համայնքային կազմակերպիչ աշխատողը խթանում է համայնքի գործողությունները։ Նա կազմակերպում է մարդկանց և նրանց համախմբում տարբեր նպատակների շուրջ՝ ճշգրտելով հիմնախնդիրը, համակարգելով տարբեր խմբերի ջանքերը, կրճատելով

ներխմբային տարաձայնությունները, բարելավելով ներհամայնքային հարաբերությունները, կազմակերպելով հանրային կրթություն, բացահայտելով ու պլանավորելով ֆինանսական միջոցները, մարդկանց ուսուցանելով տարբեր հմտություններ ու բարձրացնելով նրանց տեղեկացվածության մակարդակը: Համայնքային զարգացման գործառույթ իրականացնելիս աշխատողը նպաստում է համայնքի ակտիվացմանը, որ մարդիկ կարողանան լուծել իրենց խնդիրները: Դա արվում է կամ մարդկանց մոբիլիզացնելով, որ ծառայություններն ավելի լավ օգտագործվեն, կամ այդ ծառայությունների վրա ճնշում գործադրելով, որ դրանք փոփոխվեն, կամ էլ ինքնօգնության համակարգ զարգացնելով, որը պետք է աջակցություն ստանա համայնքից դուրս գտնվող ծառայությունների կողմից:

Համայնքի կառավարումը

Ցանկացած կազմակերպության, այդ թվում՝ համայնքի, գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե ինչպես է այն կառավարվում:

Կառավարումը՝ որոշակի գործիքների օգտագործմամբ նյութական, մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսների վրա ազդելով, կազմակերպության նպատակներին հասնելն է: Այդ գործիքները մենեջմենթի տեսության մեջ հայտնի են որպես կառավարման գործառույթներ: Դրանք են՝ պլանավորումը, կազմակերպումը, առաջնորդումը (ղեկավարումը) և վերահսկողությունը:

Պլանավորումը կառավարչական գործունեության սկիզբն է և հիմքը: Դրանից են բխում կառավարման մնացած գործառույթները: Եթե պլանավորումն իրականացվում է բարձր մակարդակով, ապա հեշտանում է կառավարման մնացած գործառույթների կատարումը, որովհետև պլանավորմամբ է սահմանվում, թե աշխատանքներն ինչպե՞ս, ե՞րբ և ու՞մ կողմից պետք է կատարվեն: Այն ենթադրում է համայնքի անցյալի (նախորդ տարիների գործունեության) ուսումնասիրության և ներկա արտաքին ու ներքին իրավիճակների վերլուծության հիման վրա ապագայի

իրագործելի նպատակների առաջադրում: Պլանավորումը նախանշում է այն տեղը, որտեղ ձգտում է հասնել ու գտնվել համայնքը, և ցույց է տալիս դրան հասնելու ուղիները: Պլանավորման միջոցով հստակեցվում են համայնքի նպատակները և գործունեության ցուցանիշները, ինչպես նաև՝ խնդիրների առաջադրումը և դրանց կատարման համար պահանջվող ռեսուրսների գնահատումը:

Արդյունավետ պլանավորման բանալին հիմնականում գործընթացի մեջ է և ոչ թե ծրագրի կամ արդյունքի: Որպեսզի գործընթացը լինի արդյունավետ, անհրաժեշտ է, որ այն լինի.

- **մասնակցային**
  (իրականացվում է որոշում կայացնողների և բնակիչների կողմից, այլ ոչ թե նրանց համար)
- **համաձայնեցված**
  (ներառում է համադրումը՝ ի՞նչ է դա և ի՞նչ կարող է լինել)
- **ամբողջական** (համատեղվում է ներքևից վերև և վերևից ներքև մտածելակերպը՝ ի՞նչ պետք է արվի, ինչպե՞ս պետք է արվի և ո՞վ պետք է անի)
- **փոփոխվող**
  (ընդունվում է, որ նպատակասլաց համակարգերը և նրանց միջավայրերը շարունակաբար փոփոխվում են, և ոչ մի պլան չի պահպանում իր արժեքը երկար ժամանակի ընթացքում):

Ժողովրդավարական հասարակության կարևոր բաղադրիչը քաղաքացիների մասնակցությունն է հասարակական կյանքին: Ժողովրդավարությունը հնարավոր չէ պատկերացնել առանց հասարակական գործընթացներին այն մարդկանց ներգրավվածության, որոնք հանրային քաղաքականությունների և որոշումների գլխավոր շահառուներն են:

Տեղական ժողովրդավարության հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ քաղաքացիները պետք է իրավունք ունենան ազդելու իրենց համայնքի

ներկայացուցչական մարմինների որոշումների վրա, որոնք վերաբերում են նրանց կյանքին, կենցաղին և համայնքին՝ ամբողջությամբ: Մասնակցային ժողովրդավարության հաստատման ամենակարևոր գործիքը մասնակցային կառավարման ապահովումն է: Մասնակցային կառավարումը մասնակցային ժողովրդավարության ամենակարևոր բաղադրիչն է: Այն ենթադրում է բնակիչների լայն զանգվածների ընդգրկումը համայնքի կառավարման մեջ:

Մասնակցային կառավարումը, ամենից առաջ, ընդգծում է այն մարդկանց ներգրավումը կառավարման մեջ, որոնք դուրս են մնացել ավանդական կառավարման գործընթացներից: Դա նշանակում է այնպիսի կառուցակարգերի ներդրում, որոնք կխթանեն բոլոր, այդ թվում՝ այն քաղաքացիների ուղղակի ներգրավումը համայնքային որոշումների կայացման գործընթացներում, որոնք տարբեր պատճառներով մասնակցելու դժվարություններ են ունենում: Դրանք հատկապես սոցիալական կարիքավոր խմբերի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն են և կանայք:

Մասնակցային կառավարումը նշանակում է նոր տիպի փոխհարաբերությունների ձևավորում համայնքի բնակիչների և տեղական

իշխանությունների միջև: Այն ընդգրկում է ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներ և գործընթացներ, որոնք ապահովում են փոխադարձ կապը և փոխազդեցությունը տեղական իշխանությունների և նրանց մատուցած ծառայություններից օգտվող շահառուների միջև: Դրանք ոչ միայն տեղական ինքնակառավարման պաշտոնական ինստիտուտներն են (համայնքի ավագանի, համայնքի ղեկավար և այլն), այլ նաև այն ինստիտուտները և կազմակերպությունները (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն), որոնք որոշակի ազդեցություն ունեն տեղական ինքնակառավարման կամ համայնքի կառավարման իրականացման վրա: Տեղական իշխանությունները, այս դեպքում, քաղաքականություններ և որոշումներ են ընդունում ոչ թե մեկուսացված ձևով, այլ

խորհրդակցելով բոլոր նրանց հետ, ովքեր անմիջականորեն կրում են դրանց ազդեցությունը: Այդ փոխհարաբերություններում կարևոր և ծանրակշիռ դեր ունեն տեղական իշխանությունները, սակայն նրանք չեն որոշում ամեն ինչ:

Մասնակցային կառավարումը վերաբերում է միայն տեղական իշխանությունների և համայնքի բնակիչների կոլեկտիվ շահերի վրա հիմնված փոխհարաբերություններին: Այն չի ընդգրկում անձնական շահի վրա հիմնված կամ անհատական (թեկուզ կառավարմանը վերաբերող) փոխհարաբերությունները: Մասնակցային կառավարման կարևոր դերակատարները համայնքի բնակիչների քաղաքացիական խմբերն են՝ իրենց կոնկրետ շահերով: Այս առումով շատ կարևոր է, որ հստակ առկա լինեն այդ խմբերը և նրանց պահանջները՝ մինչև համայնքային ինստիտուտների և այդ խմբերի միջև բանակցությունները և համագործակցությունը: Մասնակցային կառավարումը լայն հնարավորություններ է բացում քաղաքացիական

հասարակության սուբ-յեկտների և քաղաքացի-ների խմբերի ու շարժումների համար: Դրա միջոցով ՀԿ-ները և քաղաքացիական հասա-րակության այլ սուբ-յեկտները տեղական իշխանություններին են ներկայացնում իրենց առաջարկությունները, ծրագրերը և տեսակետները, դրսևորում են ակտիվություն և ձեռք են բերում ճանաչում: Ձևավորված քաղաքացիական շարժումները մեծ դեր են խաղում տեղական իշխանությունների առջև խնդիրներ բարձրացնելու և դրանց դրական լուծումներին հասնելու հարցում:

Մասնակցային կառավարումը կարող է դիտարկվել որպես տեղական իշխանությունների լեգիտիմության աստիճանի բարձրացման միջոց: Այն տեղական իշխանությունները, որոնք կորցրել են համայնքի բնակիչների վստահությունը և նրանց ընդունած որոշումները դարձել են խնդրահարույց, կարող են վերականգնել

վստահությունը համայնքի կառավարմանը շահագրգիռ խմբերին ներգրավելու միջոցով:

Շատ երկրներում մասնակցային կառավարումն ավելի շատ տարածված է տեղական ինքնակառավարման մակարդակում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղական իշխանություններն ավելի մոտ են կանգնած բնակիչներին և իրենց մատուցած ծառայություններով (օրինակ՝ ջրամատակարարում, կրթություն, առողջապահություն, աղբահանություն) ուղղակիորեն ազդում են նրանց առողջության, կենցաղի և կենսամակարդակի վրա: Իհարկե, միշտ պետք է նկատի ունենալ, որ տեղական իշխանությունների մատուցած ծառայությունների տեսակները տարբերվում են երկրից-երկիր: Այս առումով, երկրի մասշտաբով, ժողովրդավարացման և ապակենտրոնացման գործընթացները կարող են խթանել մասնակցային կառավարման հետագա ծավալումը:

Վարչական շրջանները

Հայաստանը բաժանված է տասը վարչական կենտրոնների կամ մարզերի: Յուրաքանչյուր մարզում գործում են ինքնակառավարվող համայնքներ, որոնք կազմված են մեկ կամ ավելի բնակավայրերից: Ներկայումս կա 915 համայնք՝ 49 քաղաքային և 866 գյուղական վարչական համայնքներ: Մայրաքաղաք Երևանը



նույնպես ունի համայնքի կարգավիճակ և բաժանված է տասներկու կիսաինքնավար շրջանների:

Գործող վարչատարածքային բաժանումը լուրջ և էական խոչընդոտ է հանդիսանում համայնքների կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար: Զարգացման այս փուլում տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում պատրաստ չէ ապակենտրոնացման հետագա խորացմանը, որն առաջին հերթին ենթադրում է

տեղական ինքնակառավարման մարմիններին լրացուցիչ լիազորությունների տրամադրում: Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառը տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածության բարձր աստիճանն է փոքրաթիվ բնակչությամբ գյուղական համայնքների գերակշռող թվով: Համակարգի արդյունավետ գործունեությունը մեծապես պայմանավորված է համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման սկզբունքի ընտրությունից: Հաշվի առնելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ Հայաստանում տեղական ինքնակառավարման զարգացման ընթացիկ մակարդակը՝ ենթադրվում է կիրառել կամավոր և պարտադիր ձևերի համակցված տարբերակը:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի կայացումից ի վեր, առանցքային հիմնախնդիրներից մեկը, վարչատարածքային կառուցվածքն է, ավելի կոնկրետ՝ նրա մասնատվածության բարձր աստիճանը: Ինն հարյուր տասնհինգ համայնքներից, ութ հարյուր վաթսունվեցը գյուղական են, որոնցից մեծամասնությունում բնակչությանը տրամադրվող ծառայություններից շատերը կամ իրականացվում են ցածր մակարդակով, կամ էլ ընդհանրապես չեն իրականացվում: Հայաստանյան տեղական ինքնակառավարման համակարգը դասվում է քաղաքապետ-խորհուրդ տիպին, ուժեղ քաղաքապետ տարբերակով: Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ համայնքի ղեկավարն ու ավագանին: Ավագանին՝ ներկայացուցչական, իսկ համայնքի ղեկավարը՝ գործադիր մարմինն է:

Վարչատարածքային բաժանման գործող համակարգը ձևավորելիս ստեղծվեցին բավականին մեծ թվով համայնքներ, որոնց միջև առկա են էական տարբերություններ: Դրանք վերաբերում են համայնքներին պատկանող տարածքներին, բնակչության թվաքանակին, ֆինանսական հնարավորություններին,

համայնքների կարգավիճակին և այլն: Միևնույն ժամանակ օրենսդրությունը, անկախ այս գործոններից, բոլոր համայնքներին օժտել է նույն լիազորություններով: Միջին և մեծ համայնքների համար դրանք քիչ են, իսկ բազմաթիվ փոքր և թույլ համայնքներ չեն կարողանում բնակչությանը անհրաժեշտ ծառայություններ մատուցել՝ համապատասխան համայնքային կառույցներ չունենալու կամ ունենալու դեպքում շահագործել չկարողանալու պատճառով, ինչպես նաև անբավարար ֆինանսական միջոցներով պայմանավորված:

Առաջարկվում է խնդրի լուծման երկու տարբերակ՝

- վարչատարածքային համակարգի վերակազմակերպմամբ համայնքների խոշորացումը, այսինքն՝ համայնքների միավորումը, որը կբերի իրավիճակի բարելավման:
- միջազգային պրակտիկայում լայն կիրառություն գտած միջհամայնքային համագործակցության ինստիտուտի ներդրումը, որը թույլ է տալիս, լիազորությունները պահպանելով, համայնքային մակարդակում ապահովել դրանց արդյունավետ իրականացումը:

Որքան խոշոր և կազմակերպված լինեն համայնքները, մեծ լինեն դրանց լիազորությունների շրջանակներն ու այդ լիազորությունները գործնականում իրականացնելու կարողություններն ու հնարավորությունները, այնքան առավել բարենպաստ միջավայր կարող է ձևավորվել համայնքների միջև տարաբնույթ համագործակցության ծավալման, այդ թվում միջհամայնքային միավորումների ստեղծման համար:

Բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում պետք է պարզել, թե ինչ բնական պաշարներ, մետաղական և ոչ մետաղական հանքավայրեր կան տվյալ համայնքի տարածքում, ինչպիսի հողային ռեսուրսներ գոյություն ունեն և ինչ արդյունավետությամբ են դրանք օգտագործվում: Կան նաև համայնքներ, որոնց տարածքում գոյություն ունեն կարևոր նշանակություն ունեցող պատմամշակութային

հուշարձաններ, տուրիզմի և հանգստի գոտիներ և այլն, որոնք նույնպես էական դեր կարող են խաղալ համայնքի զարգացման գործում:

Մարդկային ռեսուրսները վերաբերվում են ոչ միայն բնակչության թվաքանակին, այլև դրա կառուցվածքին, ըստ տարիքային և մասնագիտական հատկանիշի: Կարևոր է իմանալ, թե կրթվածության ինչ մակարդակ ունեն համայնքի բնակիչները և ինչ մասնագիտություններով են օժտված:

Պետք է հաշվի առնել նաև դեպի համայնք տանող, ինչպես նաև համայնքային ճանապարհներն ու կամուրջները, խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերը, գազամատակարարման համակարգը, հեռահաղորդակցության հնարավորությունները (ֆիքսված հեռախոսակապի առկայություն, բջջային հեռախոսակապի հասանելիություն, ինտերնետի մատչելիություն, հեռուստատեսային հաղորդումների հասանելիություն և այլն): Պետք է բնութագրել ոչ միայն դրանց առկայությունն, այլև վիճակն ու շահագործման պիտանելիության աստիճանը:

Առաջարկվող լուծումները պետք է ապահովեն բավարար ռեսուրսներ, հնարավոր մեծ ծավալով և որակով հանրային ծառայությունների մատուցում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, արդյունավետ կամ «լավ կառավարում», որը ենթադրում է համայնքային ավագանու լիարժեք գործառույթների իրականացում, համայնքի բնակչության մասնակցություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացին և այլն:

Այս ամենի արդյունքում ձևավորվում և ձևակերպվում է կենսունակ և արդյունավետ գործող համայնքի տեսլականը:

Հայաստանում համայնքների խոշորացման հայեցակարգը և իրավական համակարգը

«Խոշոր» համայնքի տեսլականը

Խոշորացված համայնքը տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորություններն ու ծառայությունները ամբողջ ցանկով, արդյունավետ և մատչելի իրականացնելու, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական կայուն զարգացումն ապահովելու համար բավարար բնական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ ու անհրաժեշտ ենթակառուցվածքներ ունեցող բնակավայրերի խումբ է, որտեղ բնակավայրերից մեկը հանդիսանում է կամ կարող է ձևավորվել որպես տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոն:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է այն երկրների շարքում, որտեղ համայնքների խոշորացման հակառակորդները որպես հիմնական փաստարկ բերում են տեղական ժողովրդավարության նվազումը և բնակչության հնարավոր տեղաշարժը դեպի համայնքի կենտրոնական բնակավայր:

Ավելի քան երեսուն տարի առաջ արդեն հայտնի էր ժողովրդավարության երկու հիմնական ուղղություններ. «համակարգային կարողությունը», որը վերաբերվում է համակարգի՝ տվյալ դեպքում համայնքի կարողությանը իր բնակիչների կարիքների ամբողջական բավարարելուն և «քաղաքացիների ներգրավման արդյունավետությունը», որը վերաբերվում է այն հարցին, թէ որքանով են քաղաքացիները ներգրավված և որքանով են կարողանում վերահսկել որոշումների կայացման գործընթացը: Համայնքների խոշորացման տեսանկյունից այդ խնդիրը վերաձևակերպվում է հետևյալ կերպ. որքան փոքր է համայնքը, այնքան մեծ են նրա բնակիչների՝ որոշումների կայացման գործընթացում ներգրավված

լինելու հնարավորությունները, մյուս կողմից, որքան մեծ է համայնքը, այնքան ավելի նպաստավոր են պայմանները բնակչությանը ծառայությունների մատուցման արդյունավետության տեսանկյունից: Փաստորեն, վերջին տասնամյակներում եվրոպական երկրներում համայնքների խոշորացմանն ուղղված բարեփոխումները նպատակաուղղված են եղել մեղմացնելու վերը նշված երկու հակադիր միտումների ազդեցությունը: Պետք է նշել, որ միջազգային փորձը հստակորեն չի պատասխանում այն հարցին, թե արդյոք մեծ համայնքներն իրոք ավելի արդյունավետ են մատուցում ծառայություններ, իսկ փոքրերը առավել ժողովրդավարական են: Սակայն չպետք է մոռանալ, որ եվրոպական կոնտեքստում դիտարկվող այսպես կոչված փոքր համայնքները իրենց չափերով համապատասխանում են Հայաստանյան մեծ համայնքներին: Այսպիսով կարելի է եզրահանգել, որ տեղական ժողովրդավարության տեսանկյունից, համայնքների խոշորացմանն ուղղված ներկայիս բարեփոխումները վտանգ կամ վատթարացում չեն ենթադրում:

Համայնքների զարգացման և խթանման մեթոդները ու տեսակները

Համայնքի զարգացումն իրականացնելու համար անհարաժեշտ են հետևյալ մեթոդները.

- երկխոսություն և քննարկումներ տեղական իշխանությունների, համայնքի ղեկավարների ու անդամների, ազգային և միջազգային կազմակերպությունների հետ
- կենտրոնական և տեղական լրագրերում հոդվածների ու հայտարարությունների հրապարակում
- ազգային ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ
- բրոշյուրների ու գրքույկների պատրաստում և տարածում

- համայնքներում ավարտված կամ ընթացիկ ծրագրերի վերաբերյալ պլակատների ու ֆոտոալբոմների պատրաստում, ինչպես նաև ֆոտոցուցահանդեսների կազմակերպում
- համայնքերին տեղեկատվության տրամադրում
- տեղեկատվության, համայնքների զարգացման և գործակալությունների փոխհամագործակցության համակարգման վերաբերյալ տեղեկագրերի տարածում
- մասնակցություն Հայաստանում կազմակերպված սեմինարներին և կոնֆերանսներին
- նյութերի տրամադրում ըստ պահանջի:

Համայնքի դերը գյուղատնտեսության ոլորտում

Գյուղատնտեսությունը Հայաստանում խոշոր տնտեսական ոլորտ է: ՀՀ 915 համայնքներից 866-ը գյուղական համայնքներ են: Ներկայումս մասնավոր հատվածն ապահովում է Հայաստանի համախառը գյուղատնտեսական արտադրանքի ամենամեծ բաժինը՝ 94 տոկոս: Գյուղական վայրերում ապրող բնակչության եկամուտների զգալի մասն ստեղծվում է գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսության մեջ վճարովի աշխատանքի միջոցով: Պարարտ հրաբխային հողը թույլ է տալիս մշակել ցորեն ու գարի, ինչպես նաև արածելու խոտ անասունների համար: Ոռոգվող մշակաբույսերից են ծիրանը, դեղձը, սալորը, խնձորը, բալը, ընկույզը, սերկևիլը, թուզը, նուռը, այլ մրգեր և խաղող՝ աշխարհով մեկ հայտնի կոնյակի հումքը:

Թեև քաղաքներն ու սննդի արդյունաբերությունը տնտեսական աճի շարժիչներ են, այնուամենայնիվ, դրանք մեծապես կախված են գյուղատնտեսության ոլորտից և ունեն ֆերմերների կողմից մատակարարվող գյուղատնտեսական արտադրանքի և հումքի կարիք: Մեկի բարեկեցությունը սերտորեն կախված է մյուսի բարեկեցությունից, և հնարավոր չէ հասնել կենսակայունության, եթե որևէ մեկի շահերը անտեսվել կամ ստորադասվել են: Վերամշակողի հետաքրքրություններից է

բխում, որ ֆերմերները շահագրգռված և ի վիճակի լինեն շարունակելու իրենց գործունեությունը, և համապատասխանաբար՝ ֆերմերի հետաքրքրություններից է բխում վերամշակողի բիզնեսի արդյունավետ գործունեությունն ու սեփական արտադրանքի համար շուկայի ապահովումը: Այսպիսով, վերջիններիս միջև ոչ կենսակայուն հարաբերությունների առկայության դեպքում հնարավոր չէ երկարատև հաջողություն ապահովել նրանցից որևէ մեկի համար:

Այս համատեքստում սնունդ վերամշակողների դերը՝ որպես գյուղատնտեսության ոլորտում ամենամեծ ներդրողների, անփոխարինելի է: Աջակցությունը, որ վերամշակողները կարող են ցուցաբերել, ապահովում է երկարատև տնտեսական և սոցիալական կայունություն փոքր ֆերմերների համար, ինչպես նաև հնարավորություններ է ստեղծում գյուղատնտեսական մշակության տեխնոլոգիաների և այս ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման համար:

Ներդրումների միջոցով վստահություն ստեղծելով փոքր արտադրողների շրջանում՝ վերամշակողներն ընդլայնում են նաև իրենց մատակարարումները՝ գյուղատնտեսական մթերքների անհրաժեշտ հատկանիշներով և մատակարարման պայմաններով: Սնունդ վերամշակողների և փոքր ֆերմերների միջև փոխշահավետ համագործակցությունը երկու կողմերի համար էլ հնարավորություններ է ստեղծում և խթան հանդիսանում գյուղատնտեսության ոլորտի շարունակական աճի ու կենսակայուն զարգացման համար: Նմանօրինակ փոխշահավետ համագործակցության մոդելները, որոնցում վերամշակողները և ֆերմերները կիսում են իրենց համագործակցության արդյունքում առաջացած հավելյալ արժեքները, ստեղծում են հանրային բարիք, որն իր հերթին հասանելի է դառնում ապագա սերնդի շուկայի մասնակիցներին:

Այս երկու կողմերի՝ արդար գործակցության և փոխադարձ վստահության պատրաստակամությունը փոխշահավետ համագործակցության հիմքն է: Սակայն այս հարաբերություններն ուղղակիորեն կրում են նաև այնպիսի արտաքին և

«չկառավարվող» գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են ընդհանուր շուկայական իրավիճակը, իրավական, կանոնակարգային և հարկային դաշտը, ինչպես նաև աշխարհա- քաղաքական խնդիրները:

Հայկական վերամշակողների խնդիրների մասշտաբներն այնքան մեծ են, որ նրանք միայնակ քիչ բան կարող են անել իրենց դիրքը և շուկայի կատարողականը բարելավելու համար: Կան որոշ միջոցներ, որոնք վերամշակողները կարող են կիրառել փոքր ֆերմերների հետ իրենց հարաբերությունները բարելավելու համար, ինչպիսիք են օրինակ՝

- Աջակցել խմբերի ստեղծմանը և առաջարկել համագործակցության հատուկ պայմաններ այդ խմբերի անդամներին:
- Կազմակերպել գյուղատնտեսական թրեյնինգներ և խորհրդատվություն:
- Մատակարար համայնքներում փոքր ներդրումների միջոցով խթանել վերամշակողի և համայնքի միջև կապը և փոքր ֆերմերների մոտ մեծացնել վերամշակողների կողմից առաջարկվող պայմանագրերին և պահանջներին համաձայնելու ցանկությունը:

Չնայած գյուղատնտեսության բազմաֆունկցիոնալ դերի և գյուղական զարգացման նշանակության գիտակցմանը՝ գյուղական համայնքներում տիրող իրավիճակն իրականում հեռու է կատարյալ լինելուց: Գյուղական համայնքների կարողությունների մեծացմանն ու կենսամակարդակի աճին միտված մոտեցումն իրականացնելու համար գյուղական համայնքները պետք է լիակատար մասնակցություն ունենան այս գործընթացին, նաև հնարավորություն ստանան դիտարկել և սահմանել գերակայություններն ու ներգրավված լինել զարգացման գործընթացներում, այդ թվում՝ համաֆինանսավորման առումով: Այստեղ պետք է ընդգրկվեն գյուղական տնտեսությունները, գյուղական համայնքների առաջնորդները, քաղաքացիական խմբերը, այդ թվում՝ հանրային-մասնավոր գործընկերությունները, անհրաժեշտ է նաև գործարարների ակտիվ

մասնակցությունը: Պետք է սահմանվեն բյուջետային շրջանակները և ֆինանսավորման աղբյուրները:

Գործընթացի արդյունավետության վերլուծությունը վերաբերում է հետևյալին.

- Ընդլայնել գյուղական համայնքների հնարավորությունները՝ հզորացնելով տեղական կառավարման կարողությունները և խթանելով տեղական համայնքների մասնակցությունը գյուղական զարգացման գործունեությանը:
- Հատկորոշել և իրագործել պահանջարկի վրա հիմնված գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը և բերքահավաքին հաջորդող ծրագրերը, նաեւ ավելի բազմազան դարձնել գյուղական համայնքների գործունեությունը, զբաղվածության հնարավորությունները և շուկաների մատչելիությունը:
- Ավելի հասկանալի դարձնել կլիմայական փոփոխություններին արձագանքելու և բնական պաշարների կառավարման հնարավորությունները՝ համապատասխան և հաջող փորձի վրա հիմնված հատուկ տարածաշրջանային եւ համայնքային ծրագրերի մշակման միջոցով:

Զարգացման գործընթացում պետք է հաշվի առնվեն և՛ քանակական, և՛ որակական արդյունքները: Կարևորագույն դեր ունի հաջող գործելակերպը, ինչի ապացույցն է դառնում առանձնացված վարելահողերի թիվը: Համեմատական վերլուծությունը պետք է ներառի որակական կողմերը՝ խրախուսելով ավելի կայուն և հարմարվող ֆերմերային համակարգերը, Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում հաջող գործելակերպի կանոնները, օժանդակության և սուբսիդավորման համակարգերում ընգրկված չափորոշիչները և կանոնակարգերը:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):